Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՋՈՒՐԱԲ ՆՈԳԱՒԴԵԼԻԻՆ

Մարտի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի վարչապետ Ջուրաբ Նոգաիդելիին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանի և ՀՀ ԱԳ փոխնախարար Գեղամ Ղարիբջանյանի ուղեկցությամբ:

Ողջունելով Վրաստանի Հանրապետության վարչապետի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետը շնորհավորեց Ջուրաբ Նոգաիդելիին՝ վարչապետի պաշտոնում նշանակվելու առիթով: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց տարբեր մակարդակներում երկու պետությունների հարաբերությունների արդյունավետ զարգացման համար: Հայոց Հայրապետը նշեց, որ տարածաշրջանում մեր ժողովուրդների առջև ծառացած դժվարություններն ու խնդիրները միմիայն համատեղ ջանքերով կարող են իրենց լուծումը գտնել: Նորին Սրբությունը մաղթեց, որ միշտ անխախտ մնա երկու ժողովուրդների եղբայրությունը, խաղաղություն հաստատվի տարածաշրջանում, և ժողովուրդները կարողանան ապրել իրենց երջանիկ ու բարօր կյանքով:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև Հայ Առաքելական Եկեղեցու Վիրահայոց թեմի կարգավիճակի, հայկական եկեղեցիները թեմին վերադարձնելու խնդիրների շուրջ:

Վրաստանի վարչապետը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, անդրադարձավ օրըստօրե զարգացող հայ-վրացական հարաբերություններին, Վրաստանի ներքին քաղաքական ու տնտեսական իրավիճակին: Դրն Նոգաիդելին Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց նաև Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ-ի եղբայրական ջերմ ողջույնները:

Վեհափառ Հայրապետն իր հերթին իր ողջույնները հղեց Նորին Սրբություն Իլիա Բ Պատրիարք-Կաթողիկոսին: Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ Նորին Սրբությունը հայրական հոգածություն կցուցաբերի նաև հայ ժողովրդի զավակաց նկատմամբ և, ունկնդիր լինելով նրանց խնդիրներին ու դժվարություններին, կգտնի առկա հարցերի լուծմանը:

Նորին Սրբությունը շնորհավորեց նաև Հայաստանում Վրաստանի նորանշանակ դեսպան Ռևազ Գաչեչիլաձեին՝ հույս հայտնելով, որ դեսպանն իր պաշտոնավարության ընթացքում ևս կնպաստի երկու պետությունների փոխադարձ հարաբերությունների զորացմանն ու զարգացմանը:

Հանդիպմանը ներկա էին նաև Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանը և երկու երկրների դեսպանները: